Հասունացած և կարևոր գործ էր և Հողային Ցատուկ կոմիտէների կազմութիւնը հողային հարցի արագ լուծման համար։ Կոմիտէները պիտի արձանագրէին և, սահմանուած չափով, գիւղացիութեան պիտի բաշխէին մասնաւորական, եկեղեցական-վանական և լքեալ հողերը, ինչպէս նաև պիտի լուծէին գիւղացիների և գիւղերի միջև եղած հողային վէճերը։ Երևանի դաւառի հողային յատուկ կոմիտէն — նախագահ՝ Ե. Սարգսեան, անդամներ Լ. Զոհրաբեան և հողաչափ Յակոբջանեան — մինչև օգոստոսի սկիզբը վերջացրեց աշխատանքները Ծաղկաձորի շրջանում, ուր պետականացրեց թրքական 12 լքուած գիւղերի 16,234 դես. հողերը։ Պղնձահանք (Միսխանկա) գետի աջ ափի մացառապատ հողերը միացուցին անտառին՝ ապահովելու համար վերջինիս անվտանգ աճումը։ Անտառին միացուց ընդամենը 11,233 դես.։ Մնացած 5000 դեսեատինը բաժանուեց սակաւահող Ալափարս, Գումիշ և Օղանլար գիւղերի միջև։ Մաքրավանք, Բարաքչի և Ցարուխ խիստ սակաւահող գիւղերը որոշեց տեղափոխել ուրիշ տեղ՝ լքեալ հողառատ գիւղերը։ Լուծեց նաև մի շարք միջգիւղեան և գիւղմիջեան հողային վիճելի հարցեր և հաշտեցրեց հողային վէճերով պառակտուած գիւղացիներին։ Ծաղկաձորից յետոյ մարմինը անցաւ Կոտայքի շրջանը։

Էջմիածնի հողային կոմիտէն — նախագահ՝ Յ. Արիստակէսեան, անդամներ՝ Մկ. Ստեփանեան և Աւ. Պողոսեան—գործի սկսեց յուլ. 19-ին և աւարտեց համարեա ամբողջ դաւառի աշխատանքները, բացի Սարդարապատի շրջանից։ Կոմիտէն առանձնապէս ուշադրութիւն դարձրեց հողազուրկ Ապարանի վրա, ուր հողը բաւական էր հազիւ 10—12,000 հոգու, մինչդեռ ապրում էր 25,000 մարդ։ Կոմիտէն որոշեց Ապարանի գիւղացիութեան կէսը տեղափոխել Կարսի նահանգը, որի կլիման նման է Ապարանի կլիմային և ուր կային բաւական թիւով լքեալ գիւղեր, մանաւանդ յոյների հեռանալուց յետոյ։ Տեղափոխուող գիւղերի հողերը բաժանուելու էին մնացող գիւղերին։ Փոխադրուելու ենթակայ գիւղերը տուել էին իրենց համաձայնութիւնը։ Աշտարակի շրջանի Բարաքչի, Քիրաջլու, Եաթաղլու և Քեալաչքեանդ լքեալ գիւղերի հողերը կոմիտէն տուեց մօտակայ գիւղերին՝ պայմանով, որ Բարաքչի և Քիրաջլու գիւղերում Ապարանի Նորաշէն, Սաչլու և Ղարաբուլաղ գիւղերի հողազուրկ գիւղացիները հիմնեն նոր գիւղ։ Արագածի և մօտակայ լքեալ արօտատեղիները տրուեցին հարևան գիւղերին։ Լուծուեց և Եղուարդի շրջանի լքեալ գիւղերի հարցը։

Նոր-Բայազէտի հողային յատուկ կոմիտէի կազմն էր՝ Մեր. Օղանեան՝ նախագահ, Միք. Տէր-Գէորգեան և Ե. Նազարեան՝ անդամներ։ Կոմիտէն յաջորդաբար այցելեց դաւառի բոլոր գիւղերը, տեղն ու տեղը ծանօթացաւ հողային յարաբերութիւնների վիճակին։ Որոշեց գիւղացիութեան մի մասը փոխադրել ուրիշ տեղ և հողազուրկ գիւղացիութեան բաժանել լճի հարաւարևմտեան կողմը՝ Ելենովկայի և Նոր-Բայազէտի միջև գտնուող Էֆենդիքեանդ, Հաջի-Մուխան, Աղգիբիր և այլ լքեալ գիւղերի հողերը, ինչպէս նաև Այրիջայի հարուստ արօտավայրերը և լճի հիւսիսային ափի լքեալ